

ընտանիքն ալ ինքզինքը կոչած էր Լուսիննեան:

Հետեւաբար այդ անունը յատուկ նշանակութիւն մը չունի. չափ ցանկալի եղած է այդ չըջանին եւ ուրիշ հայերէ ալ սեփականուած է կեղակարծ ազգահամարներով:

Նամակիս պատասխանը ստացալ Սեպտ. 15 թուականով: Օրիորդները կ'ընդունէին իմ եղբակացու թիւնս եւ կը յարէին. «Նաեւ այդ տեսութեամբ կը հետեւի անոնց աղնւաւան — թէպէտ ոչ արքայական — ցեղէ ծագումը»:

Որով նամակս հաւասարապէս կ'ապահովէր Լեւոնի նուիր տրուելիք օժանդակութիւնը. որով նա դարմանատան մը յանձնուեցաւ, հոն հանգստեամբ կ'ընդունէր օրերը: Իսկ ես կը ձեռնարկեմ անոր սկեսրայրին կենսադրութեան, որ հետաքրքրական է թէ՛ իբր քաղաքագէտի եւ թէ՛ իբր անհատի մը կենսագրութիւն, եւ կ'ընայ օգտակար խրատներ ընծայել մեր ազգայիններուն:

2. — Դառնանք լրացնելու մեր պատճառաբանութիւնը անոր ծագման մասին, ինչ որ չէինք կրնար աւելի ընդարձակել նամակին մէջ. ասիկա պիտի ծառայէ նաեւ լուսաւորելու ներկայ եւ ապագայ ինքնաստեղծ Լուսինեանները, որպէսզի իրենց ուղեղները ի դուր չտանջեն՝ ի խնդիր արքայական արեան իրենց երակներուն մէջ:

Ասոր համար ձեռք կ'առնենք Հայոց վերջին թագաւորին ակնատես ու կենսակից, որով նաեւ հաւատարմաւոր լինելու՝ Դարդելը, որ անոր ընտանիքին ճիշտ հաշիւը մեզի կու տայ հետեւեալ կերպով:

Հայ Լուսինեանները որդիներն էին մեր Լեւոն Գ թագաւորի Զապուն աղջկան եւ

Կիարոսի արքայեղբայր Ամօրիին: Հինգ եղբայր էին որոնցմէ առաջին երկուքը՝ Հուզոն եւ Հենրիկ զեռ պատանի սպաննուեցան(6): Երրորդը՝ Գուրգոն նստաւ Հայոց գահին վրայ, եւ ունեցաւ միայն աղջիկ մը որ Մոռէա կը բնակէր(7): Ինքն ալ սպաննուեցաւ Բոհեմոնդ կրտսեր Կղբօրը հետ, որ նոյնպէս ամուսնացած էր(8), բայց պատմիչը իրմէ զաւակներ չի յիշեր: Մնաց չորրորդ եղբայրը Յովհանն էր կու որդիներով, Բոհեմոնդ ու Լեւոն. առաջինը վաղամեռիկ եղաւ 13...-ին, երբ կը պատրաստուէր դրաւելու հօրեղբոր աթոռը(9). իրեն ոչ կին կը յիշուի, ոչ ալ որդի. դուցէ եւ ոչ ամուսնացած էր: Որով Լեւոն վերջին մնացորդն էր հայ Լուսինեան տան եւ միակ ժառանգը հայոց գահին: 1374-ին, երբ Լեւոն թագաւոր պսակուեցաւ հօրեղբորը տեղ (Սեպտ. 14-ին), իր հետ իբր ընտանիք ունէր միայն « զմայր իւր եւ զկին »: Այս պահուն կ'ընէ՝ Մարգարիտ Սուքասոնացի, Փամպուկոստայի Յովհաննէս պայլին աղջիկը «էր յի ամսոց ութից»(10). եւ հասնելէն ամիս մը վերջ (Սեպտեմբերի սկիզբները) մայր եղած կը թուի երկուորեակ զաւակներու, որով ատկէ վերջ պատմիչը կը յիշէ «թագուհին եւ մանուկները» միշտ այսպէս յոյնակի ձեւով(11): Առաջին յիշատակութիւնն է եղածը Լեւոնի զէմ զաւաղութեան մը առթիւ, որուն յաջորդեց աքսորը (12 Ապրիլ 1375): Եւ իրաւամբ զիտել կու տայ Կ. Բասմաջեան՝ թէ այս ժամանակ թագուհին առաջին մայրութենէն եօթ ամիս միայն անցեր էր, ուստի չէր կարող նա երկրորդ անգամ մայր եղած ըլլալ. որով երկու զաւակներու միանգամայն կեանք տուած էր(12):

(6) Գարգել, 27, 29. (7) Նոյն, 50, 51.
(8) Նոյն, 31, 49. (9) Նոյն, 50, 52.

(10) Գարգել, 102, 104. (11) Նոյն, 131, 132, 139, 142, 143.

(12) Լեւոն Ե. Լուս. 149.

1377-ին Լեւոն զեռ Գահիրէի մէջ է. եւ պատմիչը հոն կը յիշէ «զնա եւ զթագուհին եւ զդուստր նոցա» (159) եւ թագաւորին եւ զպատմաւորները կաստիլիոյ թագաւորին կը պատմէին « զվիշտութեան Մարգարիտայ՝ կնոջ նորա եւ զօրիորդին որ միայն կը յիշուի: Ուրեմն չափ յայտնի է միայն կը յիշուի: Վախճանած էին Լեւոնի որ մինչ այդ՝ վախճանած էին Լեւոնի մայրը՝ Կիլիկիոյ մէջ, եւ աղջիկներէն մին՝ աքսորի առաջին չըջանին: Իսկ Լեւոնի կըտակը, որ պատրաստուած է 1392-ին, մեռած կը ներկայացնէ թէ՛ կ'ընէր եւ թէ՛ միւս ուսումը, որ պատրաստուած է հոգւոյն հաշիւով, որոնց ամէնուն « հոգւոյն մար » նպատակ կը սահմանէ, եւ ապօրէն որդիին որ կ'ենդանի էր՝ բաժին կը հանէ իր հարստութենէն(14): Այս էր Հայոց վերջին թագաւորին հայրենի եւ սեփական տունն ու վախճանը. այս մասին իր պատմիչը ոչ կ'ընար սխալիլ, ոչ ալ շահ ունէր կեղծելու անձերն ու անունները:

Հ. Չամչեան ընդհակառակն Լեւոնի ամուսին տուաւ «Մարիամ անուն, յազգականութենէ Լուդովիկոսի թագաւորին հունգարիոյ»:- Չամչեանը որ Մարգարիտ Լուսինի առաջին ու միակ կ'ընէ էր ըստ տա Լեւոնի առաջին ու միակ կ'ընէ էր — եւ Դարդելի, եւ ամուսնանալ, որ հօրը դերու աղջիկ մը՝ Փիննա անուն, որ հօրը ամուսնութեան ժամանակ (այն է անոր ամուսնութեանէն հինգ տարի եւ իր ծնունդէն եօթ ամիս վերջ) արդէն չափահաս է. հարսնացած է Կորիկոսի Ծահան իշխանին, եւ երբ միասին դերեկից կ'ըլլան Լեւոնի(15): Չամչեանի մասամբ անորոշ աղբիւրներէն ո՞րը եղաւ արդեօք այս անհեթեթ տեղեկութիւններու կերտողը, չենք զիտեր:

Չամչեանի զէպս եւրոպական կարկտան մը: Բայց Չամչեան ապահովաբար աւանդեց այդ անունները մեր կարծեցեալ նոր Լուսինեաններու թելադրութեամբ իրենց մականունին, ատոր հետ իրենք զիրենք համարել տալով նաեւ «սերունդ 12 կայսերաց եւ 30 թագաւորաց», ինչպէս կը գրէր Լեւոնի անդրանիկը՝ Գուրգոն(16): Իսկ մենք հիմա կ'անցնինք ակնարկ մը տալու անոնց ծագման վաւերադիւրներուն:

Եւ առհասարակ Լեւոնի այս կենսագրութեան մէջ պիտի հետեւինք միշտ վիպագրիներուն. անոնք են նախաշիշուած երկու տետրակները (հմր. 1), եւ նոյն իշխանի Գերապայծառ Հիւրմիւղեաններու եւ ասոնց իրարու հետ փոխանակած բաղմաթիւ թղթակցութիւնները որ կը պահուին Ս. Ղազարի զիւանին (իւրաքանչիւր տարիի տուիին) մէջ: Լուսինեանի նամակները սովորաբար գաղղիներէն են. իսկ իր վաւերադիւրներու մէջ մասը (թերեւս ապագրուածներու բնագիրը) կը պահուին Թորինոյի պետական զիւանին մէջ, ինչպէս տեղեկացուցին ինծի: Ունինք նաեւ յօդուած մը՝ Լեւոնի որդւոյն ծանօթ Փոցցիէն, լոյս տեսած Omnibus(17) թերթին մէջ, եւ ոչ գերծ սխալներէ: Տպագրուածներէն կատարած մեր կոչումները կը նշանակեն Vér. Mém. Om. համապատասխաններով. նամակները՝ որոնց տեղը յայտնի է, կը ցուցնենք փակագծով բնագրին մէջ. եւ նոյնպէս նաեւ մեր աշխատութեան համարները (հ. 1 եւն.):

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

(Շարունակելի)

356. 359. 361. 363. 364.

(16) Vér. 18.

(17) Հոկ. 1938.

(13) Գարգել, 159, 173.

(14) Լեւոն Ե. Լուս. 133-134.

(15) Հ. Միքայէլ Չամչեան Պատմութիւն, Հայոց.